


13255

Ն. ՈՍԻՒԱԿԻ

ԵՎԶ Ե ՆՇԱՆԱԿՈՒՄ  
ՀԱՇՎԱՌՈՒՄ



S 1933 ԺՏՎ

FF1 DEC 2009  
25 SEP 2006

31  
D-48

Ն. ՈՍԻՆԱԿԻ

ԻՆՉ Ե ՆՇԱՆԱԿՈՒՄ  
ՀԱՅՎԱՐԴՈՒՄ

ԶԼԿՈ

743  
38

ՊԵՏՐՈՎ 1933 Ք Տ Վ  
ՀԱՅՎԱՐԴՈՒՄ

## ԻՆՉ Ե ՆՇԱՆԱԿՈՒՄ ՀԱՇՎԱՌՈՒՄ

1. ՏՆՏՀԱՇՎԱՐԿ, ԳՈՐԾԱՎԱՐՁ, ԴԻՄԱԶՐԿՈՒԹՅՈՒՆ  
ՑԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄ

Կա մեծ կարևորություն ունեցող մի պրոբլեմ, վորի նկատմամբ հետաքրքրությունը մեզ մոտ միառժամանակ թուլացել եր, բայց վորը կրկին հանդես է դալիս առաջին պլանի վրա և կանգնում իր ամբողջ հասակով, Այդ հաշվառման պրոբլեմն ե:

Կարելի է առաջադրել մի ընդհանուր դրույթ՝ վոր հաշվառման հարցի վիճակը սերտ կախման մեջ և գանվել և գտնվում ե տնտհաշվարկի, հավասարանքի, գործափարձի, դիմագրկության և բանվորական բրիգադն արտադրական աղբեկատին ամրացնելու հարցից:

Այստեղ տեղը չե քննարկել, թե ինչնե մենք անցկացրինք «ավտոմատիկ ֆինանսավորման», հավասարանքի ու դիմագրկության տարածման շրջան (միենուլն ժամանակամիջոցի լոոշորագույն տնտեսական նվաճումների հետ մեկտեղ): Փաստ ե, վոր միաժամանակ թուլացել եր նաև ուշադրությունը դեպի հաշվառումը: Սակայն հենց այդ ժամանակամիջոցումն եր, վոր հաշվառումը վորոշակի քալիկը կատարեց դեպի առաջ (վիճակագրական տարածեռության և «հեղեղի» վերացումը, փոխադրած համաձայնության սահմանումը պլանացին և հաշվառման-վիճակագրական աշխատան-

Տեխ. խմբագիր Գ. Զեմյան  
Թարգմանիչ Փիլիպոսյան  
Հբառ. № 2491, Գլավլիս 8067 (Բ)  
Պատվեր № 384, Տերած 1000<sup>0</sup>

Պետհատի տպարան, Երևան

## ԻՆՉ Ե ՆՇԱՆԱԿՈՒՄ ՀԱՇՎԱՌՈՒՄ

**1. ՏՆՏՀԱՇՎԱՐԿ, ԳՈՐԾԱՎԱՐՁ, ԴԻՄԱԶՐԿՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄ**

Կա մեծ կարեռություն ունեցող մի պրոբլեմ, վորի նկատմամբ հետաքրքրությունը մեզ մոտ միասնակ թուլացել եր, բայց վորը կրկին հանդես ե զալիս առաջին պլանի վրա և կանգնում իր ասքողջ հասակով։ Այդ հաշվառման պրոբլեմն եւ։

Կարելի յէ առաջադրել մի լնդանուր դրություն վոր հաշվառման հարցի վիճակը սերտ կախման մեջ ե գանվել և գտնվում ե տնտհաշվարկի, հավասարանքի, գործառվարձի, գիմազրկության և բանվորական բրիգադն արտադրական ադրեգատին ամրացնելու հարցից։

Այստեղ տեղը չե քննարկել, թե ինչու մենք անցկացրինք շավառմատիկ ֆինանսավորման, հավասարանքի ու դիմազրկության տարածման շրջան (միենուլն ժամանակամիջոցի խոշորագույն տնտեսական նվաճումների հետ մեկտեղ)։ Փաստ ե, վոր միաժամանակ թուլացել եր նաև ուշադրությունը գեպի հաշվառումը։ Սակայն հենց այդ ժամանակամիջոցումն եր, վոր հաշվառումը վորոշակի քայլեր կատարեց գեպի առաջ (վիճակագրական տարածեության և «հեղեղի» վերացումը, փոխադրձ համաձայնության սահմանումը պլանացին և հաշվառման-վիճակագրական աշխատան-

Տեխ. խմբագիր Գ. Զենյան  
Թարգմանիչ Փիլիպոսյան  
Հքատ. № 2491, Դրամիտ 8067 (բ)  
Պատվեր № 384, Տիրաժ 1000<sup>հ</sup>

Պետհատի տպարան, Երևան

քի միջև ընդհարության ստեղծումը ուղերատիվ հաշվվետության և ժողովրդատնտեսական հաշվառման միջև, հաշվառման գերատեսչական ու ճյուղալին մարմինների զարգացումը, վորոնք դառնում են հաշվառման վողջ սիստեմի հիմնական ողակները և այլն): Մավլարուն տնդամազատված տնտեսվարկը յենթագրում ե վորպես նախադրյալ՝ ծավալուն և անդամազատված հաւառում, վորովհետեւ տնտեսաշվարկը յենթադրում և ծախքերի և արդյունքների ստույգ հաշվառում և կալկուլացիա (իսկ դրա համար հարկավոր ե իմանալ, թե փաստորեն ինչպիսի ծախքեր և արդյունքներ են յեղել արդգինալանը կազմելուն նախորդող շրջանում) և մշտական հսկողություն արդֆինպանի կատարման ընթացքի վրա, ձեռքի տակ ունենալով հաշվետությունը: Ծավալուն գրծավարձը յենթադրում ե ստույգ տվյալներ բանվորների կազմի վերաբերյալ ըստ նրանց մասնագիտությունների ու վորակի. նրա կիրառումը պահանջում ե մշտական հաշվառում այն բանի, թե վորքան ե կատարել յուրաքանչյուր բանվոր և դրա համար վորքան ե հասնում նրան, ինչպես և ազդում տարիքիկացիայի տվյալ սիստեմը աշխատանքի արտադրողականության վրա, արտադրանքի վորակի վրա և այլն: Դժվար չե ցույց տալ, վոր դիմագրեկության վերացումը նույնպես պահանջում ե թե արտադրության միջոցների և թե բանվորական ուժի ճշգրիտ հաշվառում:

Կարճ ասած՝ իրերի դրությունը տնտեսաշվարկի, գործավարձի, դիմագրեկության բնագավառում ուղղակի ներգործում ե հաշվառման տեսակարար կշռի, թափի

ու խորության վրա: Ահա, թե ինչու Կերկայումս այդ հարցերի հետ միասին հաշվառման հարցը նույնպես դրվում ե առաջին պլանի վրա:

## 2. ԱՈՅՑԻՎԼԻՍՏԱԿԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԱՁՈՒՄՆ ՈՒ ՀԱՇՎԱՌՈՒԽՄԸ

Բայց հարցին կարելի յե մոտենալ վոչ միայն այդ յերեք՝ ներկա ետապի հանգուցալին, տնտեսական կազմակերպական կարևորագույն հարցերի տեսակետից: Նրան կարելի յե տալ նաև ավելի ընդհանուր դիրքավորում:

Մենք ներկայումս զբաղվում ենք բուրժուական լերկների տեխնիկայի բարձրագույն նվաճումները մասսայորեն լուրացնելով և սոցիալիստական պայմաններին հարմարեցնելով: Մենք արդեն սկսում ենք մասնակիորեն լրացնել ու սոցիալիստականի վերափոխել այդ տեխնիկան: Ցիխնիկալին տիրապետելը առաջնակարգ և խոշոր կարեվորության խնդիր եւ: Բայց բարացի նրա հետքերով ընթանում ե հաշվառման համապատասխան սիստեմի կառուցման հարցը: Մեր յուրացրած և հարմարեցրած տեխնիկան մասսայական ու նշանակալի չափով ավտոմատացված և մեքենայացված արտադրության տեխնիկա յի: Այդ տեխնիկայի լրացումն ու սոցիալիստական վերափոխումը միայն ուժեղացնում ե նրա այդ բնույթը: Արդեն բուրժուական պայմաններում անընդհատ հոսանքով կատարվող աշխատանքը առանձին ձեռնարկության կամ տրեստի համար անխուսափելի յե դարձնում բոլոր պլրոցեսների պարզ, ճշգրիտ, ճկուն և անընդհատ հաշվառումը թե տնտեսական և թե տեխնիկական

տեսակներից, ժամանակակից մասսայական արտադրությանը յուրահատուկ՝ նորմալացման, ստանդարտացման և անընդհատության սկզբունքների հիմունքներով առաջանում են նրանց համապատասխանող հաշվառման մեթոդները, այսպէս կոչված «ստանդարտ էսուտ» (ինքնարժեքի հաշվառմը արված նորմաների ու սրանից կատարված շեղումների հիման վրա) և գրտիեկական հաշվառումը: Հարեւանցիորեն նկատենք, վոր այդ մեթոդները հարմարեցնելով սոցիալիստական պայմաններին պետք ե գործադրվեն և մեղ մոտ, նորմալացման, ստանդարտացման ինչպես և անընդհատության սկզբունքները պայմանավորում են հաշվառման մեքենայացումն ամենալայն չափերով — վոչ միայն լուրացանչուր տվյալ հաշվառման ապարատի գինումը դանական տիպի հաշվային մեքենաներով և հաշվառադրական մարմինները համապատասխան արտադրական միավորների հաշվալին ցիխերի վերածումը, այլ և կատարվող գործողությունների մեքենայացման հաշվառման կիրառուց՝ արտադրության գործիքներին հաշվային ինքնագիր մեքենաներ ամրացնելով:

Այդ պատճառով սոցիալիստական ինդուստրացման տճումն անխուսափելիորեն պահանջում ե, վոր հաշվառումը դրվի առավել ժամանակակից ձևերով: Սակայն հարկավոր ե հիշել, վոր հաշվառման այդ ձևերին աիրապետ խնդիրը ներկայացնում ե հատուկ դժվարություններ: Դորձարանի գործարկման ժամանակ արտադրության կաղմակերպման հարցն այն ե՝ գործողությունների փոխադարձ ձիւտ գուգործումը, աշխատող ուժերի ճիշտ դասավորումը և փոխադարձ լինեթարկման սահմանումը մեր ամենահիմնական դժվարություններից մեկն և հանդիսանում: Բայց այդ դեպքում

մեքենաների փոխառած սիստեմը և նրա հետ կտպված տեխնոլոգիական պլոցեալ նյութական հիմք ե ծառայում կաղմակերպական աշխատանքի համար, իսկ հաշվառման կաղմակերպումը առաջին հերթին մերուգործական յեվ կազմակերպական խնդիր ե. ալստեղ առաջին պլանի վրա գտնվում ե հաշվառման բովանդակության ու ձեր խնդիրը՝ սոցիալիստական եկոնոմիկայի պահանջների համեմատ աշխատողների տեղաբաշխման և գունկցիաների խնդիրը: Իսկ հաշվառման սիստեմը մեքենաներով գինելու և այս վերջիններիս գործարկումը ավելի քիչ դժվարություններ են ներկայացնում:

Բայց հարցը միայն այն չե, վոր մենք կիրառում ենք ինդուստրացում, այլ և այն, վոր դա սոցիալիստական ինդուստրացումն ե, վոր մենք կառուցում ենք սոցիալիստական հասարակությունը: Դեռ բուրժուական պայմաններում ժամանակակից խոշոր ձեռնարկությունը պահանջում և բարձր զարգացման հաշվառում, սակայն այդ սացատրվում ե նրանով, վոր արդեն բուրժուական խոշոր ձեռնարկություններում զարգանում ե աշխատանքի հասարակական ձեզ, նախապատրաստվում ե արտադրության պրոցեսի հանրախացումը: Իսկ սոցիալիզմին անցնելու գեղագում հաշվառումը պետք ե ընդունված անտեսական ու հասարակական կյանքի բոլոր բնագավառները, թափանցի նրանց բոլոր բազկացուցիչ ողակները: Լենինն իդուր չեր պնդում, վոր սոցիալիզմը դա հաշվառում ե: Վարույնեալ սոցիալիզմը մի հասարակարգ ե, վորի ժամանակ մարդիկ զիտակցորեն են զեկավարում իրենց հասարակական կյանքի վերաբերության պրոցեսը, իսկ գիտակցական դիկավարությունը պահանջում է ստուգդ

և լիակատար չափով իմանալ այդ տարրերը, այսինքն՝ նրանց ճիշտ հաւաքառում: Գիտակցական զեկավարությունը պլանաշախ զեկավարություն է: Պլանի ճիշտ կառուցման համար անհրաժեշտ է ճիշտ և համապարփակ հաշվառում. նույնքան հարկավոր և այդ նաև պլանի գործնական կենսագործման համար: Այդ պատճառով շարժումը գեպի ծավալուն սոցիալիզմը անխուսափելիորեն պետք է լինի միաժամանակ նաև մի շարժում գեպի տնտեսական և հասարակական պրոցեսների համապարփակ, անդամաղատ և ճզզըիտ հաշվառումը: Յեվ յեթե մեզ մոտ այդ ուղղությամբ նկատվել է վորոշ հետամնացություն, ապա առավել ևս հարմայական և դառնում ներկայումս տեմպերի արագացման անհրաժեշտությունը:

3. ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԲԵՎ ՊԱՅ ՔԱՐՔ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՄՆԱՑՈՒՐԻՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ. ՀԱՇՎԱՌՈՄԱՆ ՃԻՇՏ ԹՎԻ ԼՈԶՈՒՆԳԻ

Բայց այս խնդիրն ունի և մի այլ չափաղանց ելական կողմ: Լենինը պնդում եր, վոր ռմենք պետք է տանինք այն (վիճակագրությունը) մասսաների մեջ, ժողովրդականացնենք, վորպեսզի աշխատավորները հետզհտե սովորեն իրենք հասկանալ ու տեսնել, թե ինչպես և վորքան պետք է հանգստանալ վորպեսզի առանձին կոմունաների տնտեսության գործնական արդյունքների համեմատությունը լինի ընդհանուրի հետաքրքրության և ուսումնասիրության առարկա, վորպեսզի աշխիքի ընկնող կոմունաներն անհապաղ պարզեատրվեն: Այս կապակցությամբ և դրված նաև լենինի լոգունզը համաժողովրդական հաշվառման ու վերահսկողության

մասին: Համապարփակ հաշվառումն անհրաժեշտ է նրա համար, վոր և կոմունա-պետության մեջ իրենք աշխատավորներն են կառուցում սոցիալիզմ և միան նման հաշվառումն ե նրանց հնաբավորություն տալիս աշխատանքի տվյալ բնագավառում տվյալ մոմենտին իմանալու, թե ինչի համար, ինչպես և ինչի դեմ պետք ե պարզաբերել:

Յեթե կոմունիզմի առաջին, ստորին փուլի (սոցիալիզմի) համար հատկանշական և հասարակական արտադրանքի անհատութեն սպառվող մասի բաշխումն «ըստ աշխատանքի» և յեթե, մյուս կողմից՝ զարգացման այս աստիճանում լայն զարգացում և ստանում սոցիալիստական մրցումը (աշխատանքի հանդեպ կոմունիստական վերաբերմունքի արտահայտություն), ապա աշխատանքի արտադրողականությունը, վորակը, և ընդհանուր կուլտուրականությունը բարձրացնող այդ լերկու լծակների շարժման ելական նախադրյալն և հանդիսանում «համաժողովրդական հաշվառումը»: Հենց նա յե ցուց տալիս, թե «ինչպես և վորքան պետք է աշխատել ու ինչպես և վորքան հանգստանալ», նա յե, վոր հայտարերում և իդիտություն բոլորի «աշխիքի ընկնող կոմունաների տնտեսությունների գործնական արդյունքները»:

Այդ հավասարապես նշանակում է, վոր նման հաշվառումն ակնահայտորեն բացահայտում, համաժողովրդական վերահսկողության տակ և դնում մանրությունական մորթապաշտության, կորզողականության, անբանության արտահայտությունները, հասարակական շահերի անտեսումը, անձարակությունն ու քալագլողությունը, չխոսելով արդեն սոցիալիստական շինարարության հաջողությունները կասեցնելու

փորձերի մասին՝ վերացվող դասակարգերի բեկորների կողմից:

Պրոլետարական մասսաների դասակարգալին պարքարում՝ հանուն ծավալուն սոցիալիստական եկոնոմիկայի, անդասատկարդ հասարակության կառուցման՝ աշվառումը հանդիսանում է իրեն նախապայման ու դեմք: Նա նախապայման և զենք ե մարդկանց վիճակության և եկոնոմիկայի մեջ կապիտալիզմի մնացորդները հաղթահարելու, նրանց հոգեբանությունից մանրբուժուական ձգտումներն ու սովորություններն արմատախիլ անելու համար մղվող պայքարում:

Նա միա համանակ նաև դասակարգային կովի որյեկտ ե, հաշվառման թվերի աղավաղումը, հաշվավիճակագրական աչքակապությունը այլ բան չե, ինթե վոչ մանը բուրժուական և բուրժուական դիմադրության արտահայտություն սոցիալիստական շինարարության հանդեպ: Ուստի պայիշար նիւթ թվի համար գառնում ե ներկա ետապի հիմնական լողունգը հաշվառման բնագավառում:

Հարցի նման դբվածքի պայմաններում հաշվառման սոցիալիստական սիստեմի կառուցումն ավելի լայն խոնդիր ե, քան կարող են ընդդրկել խորհրդական իշխանության վորե և մարմի, այդ թվում և ժողովրդական հաշվառման հասուլ վարչության գուծունելության շրջանակները: Դա բոլոր մարմինների և կազմակերպությունների գործն ե, վողջ բանվոր դասակարգի, բոլոր աշխատավորների, բանվոր դասակարգի ամբողջ կուսակցության և նրա լերիտասարդական կազմակերպության գործը:

4. «ՀԱՇԻՎՆ» ԱՐՀԱՄԱՐՀԵԼՈՒ ՑԵՎ ՀԱՇՎԵԼ ՈՒ ՀԱՇՎԱՐԿԵԼ ՍՈՎՈՐԵԼՈՒ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Համապարփակ և համաժողովրդադան հաշվառման կազմակերպումը նաև խոշոր հասարակական-կուլտուրական խնդիր ե: Մեր լերկը հետամնացությունը, վոր մենք այժմ հաղթահարում ենք, արտահայտվում ե իմիջի ալլոց և նրանում, վոր մենք շատ վատ ենք կարողանում հաշվել ինչպես բարի նեղ, նույնպես և լայն իմաստով: Նույնիսկ քիչ թե շատ կուլտուրական մարդիկ մեզ մոտ հակում ունեն իրերի մասին դատելու «ընդհանրապես», առանց ստուգ տվյալների, առանց «թվերը ձեռքի տակ ունենալու». Նրանք սովորություն չունեն ճիշտ հաշվառել ծախքերն ու լեկամուտները (այդ թվում և իրենց սեփական ծախքերն ու լեկամուտները), սովորություն չունեն հաշվել ու հաշվաբեկ իրենց և ուրիշի ժամանակը: Սրա մեջ անդրադանում ե մեր գուղի տնտեսական-կուլտուրական հիտամնացության աղդեսպությունը, վոր գեռ շատ վաղուց չե, ինչ գերակշռող տեղ եր գրավում մեր եկոնոմիկայում և իր ընդերքում պահպանում եր նահապետական գյուղացիական տնտեսության ու մանր ապրանքային արտադրության աարքերը, վորպես գերակշռող տարրեր:

Մեզ բոլորիս հարկավոր և ուժգին թափով սովորել ու հաշվարկել: Այդ պետք ե սովորեցնել աշխատավորական լայն գանգվածներին, պետք ե կազմել հաշվեառների ստվար կազմեր, վորոնք իրենց աշխատանքներում ոժանդակություն ստանան աշխատավորական բրիգանդներից: Տեխնիկայի տիրապետումից հետո, սա առանց չափազանցության, մեր ամենահայացական

խնդիրներից մեկն ե, քանի վոր սա տնտեաշվարկի և գործավարձի կիրառման, կոլտնտեսությունների կաղմակերպական-տնտեսական ամրացման խոշորագույն նախադրյալն ե:

Մոտ ժամանակներս կալացած հաշվա-վիճակագրական աշխատողների համամիութենական խորհրդակցության մեջ ցիտատ բերվեց Պետպանի մի աշխատակցի դիմումից: Այդ ընկերոջ սպառնացել և պլանային տեղափոխման կարգով հաշվառման սիստեմի մեջ աշխատանքի անցնելու վատանգը: «Յեթև լես Պետպանին հարկավոր չեմ, — գրում ե այդ ընկերը — խնդրում եմ կրծատել և թուլլատրել ստանալու իմ աշխատավորական ցուցակը, իս ինքս կդանեմ ինձ համար համապատասխան աշխատանք:

Բանն այն ե, վոր ժողատնտեաշվառման կենտրոնական վարչության մեջ նույնիսկ մեկ որ աշխատելուց և հաշվառման անցնելուց վճռականապես հրաժարվում եմ, իսկ փաստորեն հաշվի հետ գործ ունենալ հաստատապես մտադիր չեմ...: Մշտապես աշխատում եմ պլանի, նրա բովանդակության և կազմակերպման հարցերի վրա... Նախաձեռնությունից զրկվելու, հաշվառման խաղաղ հանգրվանն անցնելու և մանր հողվածներ գրելու միանգամայն անընդունակ եմ»:

Այստեղ զբանորված հոգեբանությունը չափաղանց բնորոշ ե: Մարդը որդանական զգվանք և ցուցաբերում դեպի հաշիվը, կամենում ե զբաղվել միմիայն սպլանի բովանդակության ու կազմակերպման հարցերով, այսինքն հենց ոռոսավարի — ինտելիգենտական աշխատանքով «ընդհանրապես». հաշվառումը, արհամարհանքով բնութագրումնե, վորպես հանգրվան և հողվածագրություն: Այստեղ միաժամանակ արտահայտվում ե

և պլանավորման գծով մեր ունեցած զիրքավորումների բնորոշ աղավաղումը: Յերբ մենք վերև խոսում ենքնքայն մասին, թէ հարկավոր ե սովորել հաշվել ու հաշվարկել, ապա նկատի ունելինք պլանալին հաշվարկումը, վոր հիմնված ե ստույգ հաշվալին տվյալների վրա և ստուգվում ե հաշվառման միջոցով: Պահնը և հաշվառումը սոցիալիստական հասարակարգում անխղելիորեն կազմված են միմյանց հետ: Պահնը հենց պետք ե լինի ստույգ հաշվարկում և ամենենվին վոչ թե պլան «ընդհանրապես», իսկ մեր վորոշ աշխատողներ հակում ունեն հակադրել պլանը հաշվառման և նույնական «հաշվին»: Այս տրամադրությունը չափաղանց տարածված ե հեանգում և խիստ վնասակար գործնական դրույթների: Մի կողմից մի շարք պլանալին աշխատողներ, պլանաները կազմելու ժամանակ, սկսում են «սարքել» պակասող վիճակդրական տվյալները, փոխանակայդ տվյալները փաստորեն կյանքից քաղերու նույն այդ արհամարհված «հաշվի» միջոցով: Մյուս կողմից՝ ոպերատիվ աշխատողները, «իջեցնելով» պլանը և հենվելով՝ «պլանը պետք ե անպայման կատարվի» լոգունքի վրա, չեն հետաքրքրվում փաստացի ամփոփիչ թվերը ստանալու և իրենց հաշվետվությունների մեջ հաշվառման թվերը փոխարինում են պլանալին թվերով, «իրականը» փոխարինում են «յենթազրականով», իսկ սրա հետևանքով պարարտ հող և ստեղծվում ալելույականության և նույնիսկ աչքակապության համար, վորոնք նման պայմաններում հանդիս են գալիս անհապաղ:

«Հաշվին» արհամարհելու այդ մեծամիտ հոգեբանությունը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ մանր բուրժուական հետամնացության արտահայտություն: Ուստի

այդ մեծամիտ հոգեբանության դեմ, վորը պարունառմ և նաև բավականաչափ աղայականություն, պետք կե մղել վճռական պայքար: Պետք և սովորել հաշվելու ու հաշվարկել, պետք և աշխատել թվերը ձեռքի տակ, պետք և ամենուրեք ձեռք բերել ճիշտ թվեր, պետք և կենսագործել համաժողովրդական հաշվառումն ու վերահսկողությունն, այնպես, ինչպես նշանակալի չափով մենք կենսագործել ենք պլանի համաժողովրդական կազմումը՝ իրենց իսկ աշխատավորների մշակած հաճախական պլանների ձևով:

### 5. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀԱՇՎԱՐՈՒՄ

Տնտեսության և հասարակական կյանքի սոցիալական ձևերին անցնելն անխուսափելիորեն փոփոխություն և մտցնում հաշվառման բնույթի մեջ: Մենք գեռ առաջ նշեցինք, վոր մասսայական, ավտոմատացված և մեքենայացված արտադրության զարգացումը հաշվառման մեջ մտցնում և ստանդարտացման, անընդհատության, մեքենայացման հիմունքները, վոր հաշվառումն ու պլանավորումը փոխադրամարար լենթարկվում են միմյանց, վոր հաշվառումը դառնում և մասսայական, համաժողովրդական: Բայց մենք արտեղ միայն այդ նկատի չունենք: Մարդկանց գիտակցության և եկոնոմիկայի մեջ կտպիտալիքմի մնացորդները հաղթահարելու հետ միասին վիճակագրությունը տեղի լի տալիս ուղղակի ժողովրդատեսական հառվառման առաջ և նահանջում յերկրորդ պլանը:

Ուստի իդուք չե, վոր առաջվա կենտրոնական վիճակագրական վարչության տեղն այժմ գրավել և ժողովրդատնտեսական հաշվառման վարչությունը, Այդ

վերանվանումը պատահական չե և բնութագրում ե մարմինների մի ամբողջ սիստեմի գործունելության ողղության փոփոխությունը\*):

Վիճակագրություն ասելով, մենք հասկանում ենք մթողների ու գործողությունների մի ամբողջություն, վոր հնարավորություն և տալիս հաշվառման լենթարկու մասսայական տարերային լերկութները: Վիճակագրությունը կիրառվում ե վոչ միայն հասարակական լերկութների, այլ և բնության լերկութների ոսումնասիրության համար (որինակ՝ աստղաբաշխության մեջ, ժառանգականության յերկութներն ուսումնաբիրելիս, բույսերի տեսակները ստանալիս և այլն): Լիճակագրության հիմքում դրված ե այսպես կոչված «մեծ թվերի որենքը»: Այդ որենքը սահմանում ե, վոր դիտողության և հաշվառման տեսադաշտում բավական մեծաքանակ որեկտներ ընդգրկելու դեպքում միայն կարող են միմյանց չեզոքացնել հիմնական, տարերայնորեն դասավորվող որենքից պատահական շեղումները, և վոր այդ տեսդենցը կարելի լի վորոշել ու չափել: Հավանականությունների թեորիան և նրա վիճակագրական գործադրումը տալիս են «կայուն շարքեր» կազմելու և նման տեսդենցները վորոշելու և չափելու կոնկրետ կանոններ:

Միանգամայն պարզ ե, վոր հասարակական լերեկութների հաշվառման նման լեղանակները պետք ե գերիշեն այն հասարակարգում, վորտեղ ենդելսի

\*) Մակայն հարկավոր ե նօել, վոր ժողովրդատնտեսական հաշվառում տերմինն ընդգրկում ե միայն այդ սիստեմի կարեռագույն խնդիրը: Այդ սիստեմը քաղաքում ե նաև ազգաբնակչության, լուսագործության, կուլտուրայի հաշվառումով և այլն, այսինքն՝ պետական հաշվառման բոլոր տեսակներով ընդհանրապես

արտահայտությամբ՝ Շնրանց (մարդկանց) սեփական հասարակական գործունեության որենքները հակաղը վում են նրանց, վորպես իրենց վրա իշխող բնության ոտար որենքներ»:

Քանի դեռ մեղ մոտ չեր կառուցված սոցիալիստական անտեսության հիմքը, քանի դեռ հանրայնացված անտեսությունը լիովին չեր գերակշռել «մասնավոր սեկտորին», քանի դեռ այդ պատճառով վճռական հարված չեր հասցված տարերակնության տարրերին մեր ժողովրդական անտեսության մեջ — մինչև այդ մեզ մոտ ել վիճակագրությունը գերակշռող դեր եր խաղում։ Իսկ նորագույն ժամանակներում առաջին պլանն ե քաշվում ժողովրդատեսական հաօպառումը։ «Հաշվառում» ասելով, այս դեպքում, մենք հասկանում ենք մեր կողմից գիտակցորեն ծրագրվող գործողությունների և նրանց արդյունքների վորակական-քանակական ընդգրկումը։ Վորովինեաւ ինչպես ձևակերպում և Ենդեւը, մենք այժմ սկսել ենք «ինքներս միանգամայն գիտակցորեն ստեղծել մեր պատմությունը», ևինչև այժմ պատմության մեջ տիրող որյեկտիվ և ոտար ուժեր անցել են մարդկանց հսկողության տակ։ Առաջին պլանում դրված հաշվառման և պահի հասկացողություններն անբաժան կերպով իրար հետ կապված հասկացողություններն են. նրանք յերկուսն և հանդիսանում են «իրենց պատմությունը գիտակցորեն կերտող» միջոցներ։

Թ

16

## 6. ՊԱՀՊԱՆՎՈՒՄ Ե ԱՐԴՅՈՒԹ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՄՈՒՆԻԶՄԻՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

Սակայն այն հանդամանքը, վոր առաջին պլանն ե քաշվում հաշվառումը, դեռ ամենաին չի նշանակում, վոր վիճակագրությունն ամբողջովին դուրս և մղվում և մահանում։ Զիսուելով այն մասին, վոր բնօւրյան տարերային յերկույթներն ուսումնասիրելու ասպարեզում վիճակագրության գրաված տեղը պետք և վերապահվի նրան, վիճակագրական մեթոդը և վիճակագրական բնույթի գործողությունները պահպանում են իրենց նշանակությունը և հասարակական կյանքի համար մասամբ կոմունիզմի ստորին աստիճանից բարձր աստիճանին անցնելու ժամանակ և մասամբ ել կոմունիզմի ժամանակ ընդհանրապես։

Վերջին դեպքում վիճակագրական պրիոմների համար նյութ են հանդիսանում «մարդկային կյանքի հասարակական արտադրության» այնպիսի յերկույթներ, վորոնց հասարակություններ կարող ե կարգավորել միայն անուղղակի կերպով. այդ այն յերկույթներն են, վորոնք կապված են կենսաբանական, բնական ֆակտորների հետ. Այսպես, որինակ կոմունիզմի նկատմամբ միայն ծաղրանկար կարող ե համարվել այն պնդումը, թե նրա ժամանակ գիտակցորեն ու անմիջականորեն պետք է կարգավորվեն ու պլանավորվեն ամուսնություններն ու բնակչության վիրարտադրությունը։ Ամուսնական հարաբերությունները կոմունիզմի ժամանակ, ընդհակառակն զառնում են իսկապես ազատ, քանի վոր տապալվում և աշխատավորության վրա ծանրացած կապիտալի լուծը։ Սակայն հասկանալի յե, վոր զրանով չի բացասվում այն

17

հանգամանքը, վոր հասարակական դաստիարակման կարգով, հասարակության արանձին անդամների վրա կոլեկտիվ մտքի ու կամքի փոխադարձ ներգործման կարգով հասարակության անդամներն այս ասպարեզում կպահպանեն վարքի թե հասարակական և թե կենսաբանական տեսակետներից առավել նպատակարձարմար վորոշ կանոնները: Բայց, իհարկե, այս ասպարեզում չի լինի ուղղակի կարգավորում ու պլանավորում. ազգաբնակչության պլանավորած թվերն առաջված նման կմնան հաւաքոռումներ, բայց վոչ պլանալին «առաջադրանքներ» կամ «լիմիտներ»: «Ազգաբնակչության որենքը» կոմունիստական հասարակության մեջ, ավելի պարզ ու հասարակ կլինի, քան կապիտալիստական հասարակության մեջ, բայց և նշանակալի չափով կմնա վորպես «որբեկտիվ» որենք: Յեվ այդ հատկապես նրա համար, վոր ինչպիսի միջոցներ ել մենք ձեռք առնենք մահացության կրծատման համար և մարդու միջամտության ինչպիսի աստիճան ել յենթադրենք կենսաբնական պրոցեսների մեջ, տարերակին, բնական մոմենտը ուղածդ չափով պահպանվում են, իսկ դրա հետ միասին պահպանվում են նաև նյութ՝ վաճակագրական պրիոմների համար, / ժողովրդագրական հաշվառման բնագավառում:

Այս բոլոր ասածներս վերաբերում են բավական հեռավոր ժամանակների և մասամբ գուշակելի պլութեմների, բայց մոտիկ ապագայում ել մենք չենք կարող ազատվել վիճակագրական մեթոդների չափաղանց լայն գործադրումից (մանավանդ հաշվառման նյութերի մշակման ժամանակ) լերկու հիմնական պատճառով:

Առաջինը. Եթե մենք ասում ենք, վոր սոցիալիզմի հիմքի կառուցման ավարտումը վճռական հարված

հասցեց տարերայնության աարերին մեր ժողովրդական տնտեսության մեջ, ապա այդ չի նշանակում, թե նա վերացրեց նրանց վերջնականապես, Կապիտալիզմի մասցորդներն եկոնոմիկակալի և մարդկանց գիտակցության մեջ ըստ եյության վոչ այլ ինչ են, յեթե վոչ հենց այդ տարերայնության տարբերը: Իսկ չեն վոր մենք հազիվ թե վերացնենք նրանց վերջնականապես առաջիկա մեկ հնդամելակի ընթացքում: Դասակարգային պայքարը պահպանվում ե դեպի անդամակարգ հասարակությունը շարժվելու ընթացքում, այդ պայքարի առարկա ին հանդիսանում կապիտալիզմի մասցորդներն եկոնոմիկակալի կամ միայն մարդկանց գիտակցության մեջ: Հենց սրանք ել կազմում են տարերայնության տարրը, վորը հաղթահարվում ե այդ պայքարում, մասնավորապես պլանի համար մղվող պայքարում: Այդ տարրը մշտապես սահմանափակվում ե իր նշանակությամբ, բայց դեռ լերկար ժամանակ պահպանում ե իր լուրջ նշանակությունը: Այդ հանգամանքը չենք կարող հաշվի չափանիկ այդ թուչք կիներ դարձացման վորոշ աստիճանի վրայից:

Յերկրորդ. մենք կառուցում ենք սոցիալիստական եկոնոմիկա և սոցիալիստական հասարակություն վոչ վորևէ պատրաստի որինակով կամ մողելով: Մենք նրանց չենք վերաբարություն մեխանիկորեն, չենք ընդորինակում, մենք նրանց նոր ենք կառուցում, առաջին անգամ մարդկության պատճության մեջ, ակտիվ, ստեղծագործական դասակարգային գործունելության պրոցեսում: Սոցիալիստական շենքի հիմնական գծերը և այստեղից բղխող մեր պայքարի հիմնական ուղղությունները մեջ համար պարզ են: Մենք ունենք մարդքիզմ-լենինիզմի հիմնագիրների մշակած տեսակա-

Դ. «ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ» ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ  
ՑԵՂԱՆԱԿԸ ՅԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՊՊԵ-  
ՐԱՏԻՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ. ՀԱՇՎԱԲՄԱՆ  
ՈՒՆԻՖԻԿԱՑԻԱՆ

Սակայն վիճակադրության և հաշվառման տարրերու-  
թյունն արտահայտվում է նաև նյութերի հավաքման  
գծով: Վիճակադրության համար, վորը հաշվի է առ-  
նում մասսայական տարբերացին լերկությները, հատ-  
կանշական ե այս վերջիններիս դիտումը դրսից, հեռ-  
վից: Վորչափով մարդիկ իրենք գիտակցորեն չեն վա-  
րում իրենց հասարակական գործողությունները և  
նրանց գործունելության որենքները հակադրված են  
իրենց, ինչպես բնության որենքներ, անհնար և ժողո-  
վրդատնտեսական հաշվառումը, վոր թափանցում ե  
բուն իսկ տնտեսական գործունելության մեջ և կենսա-  
գործվում է ժողովրդատնտեսական պլրոցեսի անմիջա-  
կան մասնակիցների կողմից: Առանձին ձեռնարկու-  
թյուններում (բայց վոչ բոլորում) գորություն ունի  
մասնատնտեսական հաշվառում, բայց վորի խնդիր-  
ներն ու ձեռները նույնքան քիչ են համապատասխա-  
նում հասարակական ամբողջությունը հաշվառելու  
պահանջներին, վորքան մասնատնտեսական անսարքի-  
ան համապատասխանում և պլանավին հասարակական  
տնտեսությանը: Այդ պատճառով հին վիճակադրու-  
թյունը հաշվառման նյութերի հավաքման առավել  
հուսալի լեղանակ եր համարում այսպես կոչված եքս-  
պերիցիոն լեղանակը, այսինքն գործողության վայրը,  
հետազոտման լենթակա շրջանը, տնտեսության ձևուղը  
և այլն պլրոքեսիոնալ վիճակագիրներից կազմված եքս-  
պերիցիա ուղարկելը, աշխարհագրական, ցեղագրական

և այլ եքսպերիցիաների նման: Խմիջի այլոց ալգ նշա-  
նակում եր, վոր նյութի առավել հուսալի տեսակը  
ձեռք եր բերվում միանվագ կարգով, միմիայն մի  
«կրիտիկական մոմենտում» և, լավագույն դեպքում,  
հետազոտությունը կրկնվում եր քիչ թե շատ լերկար  
ժամանակից հետո: Խակ ընթացիկ կարիքների համար  
ոգտվում եյին հարցաթերթիկներով, թղթակիցների  
հաղորդագրություններով և այլ դարձալ նույն զրաից  
դիտելու յեղանակներով:

Քանի գեռ մեր տնտեսության մեջ խոշոր դեր եր  
խաղում նրա մասնավոր սեկտորը, քանի գեռ գյուղա-  
տնտեսության մեջ գերակշռում եր մանր ու մանրա-  
գույն գյուղացիական տնտեսությունը, ալդ ժամանակ  
մող մոտ ել հաշվառման նյութերը հավաքելու նման  
լեղանակները ներկայացնում եյին որվեկտիվ անհմա-  
ժեշտություն:

Ընդհակառակը, լերը մասնավոր կանոնադրությունը  
վում և վոչ միայն արդյունաբերության մեջ, այլ և  
առևտությունների մեջ, լերը գլուղատնտեսության կոլեկտիվա-  
ցումն ընդունել ե մասսայական, իսկ հացահատիկային  
շրջաններում համատարած բնույթ՝ միանդամայն ակն-  
հայտ ե, վոր հասարակությունը և անհրաժեշտ են դառնում  
հաշվառման նյութը հավաքելու այլ յեղանակներ: Հանրայնացված, միասնական պլանով աշխատող տնտե-  
սության դեպքում ժողովրդատնտեսական հաշվառումը  
ներս և թափանցում ոպերատիվ տնտեսական գործու-  
նելության մեջ, դառնում ե նրա անհրաժեշտ նախա-  
դրյալը այնպես, ինչպես պլանը: Հաշվառումը սկսում ե  
միաձուլվել ոպերատիվ հաշվետվության հետ: «Նյութեր  
հավաքելու» ծանրության կենտրոնը (լեթե միայն  
այստեղ կարելի է գործածել այս արտահայտությունը)

փոխադրվում ե իրենց իսկ տնտեսական միավորների հաշվառման քջիջները: Ժողովրդատնտեսական հաշվառման սարմինների արդի սիստեմի գործունելյությունը տարբերվում ե հին կենտվիճակի գործունելյությունից նրանով, վոր վերջինս ջանում եր ինքնուրուցն կերպով: «Հավաքել» իր նյութը, այսպես կոչված «գերատեսչական վիճակագրությանը» նայում եր վորպես ոժանդակ աղբյուրի և հաշվառման բազա չեր կարող ընդունել ոպերատիվ հաշվետվությունը, Այժմ ժողոտեսական հաշվառման վարչությունն ամենից առաջ հանդիսանելում ե մի մարմին, վորը միավորում, կարգագորում և վերահսկում ե բոլոր տեսակի տնտեսական կազմակերպությունների հաշվային աշխատանքը, «գերատեսչական» հաշվառումը ավելի ու ավելի լեղառնում տվյալները հիմնական աղբյուրը, ոպերատիվ հաշվետվությունն ավելի ու ավելի յեղառնում հաշվառման բազա:

Հին կենտվիճակի ժամանակներում ել իհարկե գործություն ուներ պետական ձեռնարկությունների հաշվետվություն, բայց կապիտալիստական տրադիցիաների բնորոշ մնացորդ եր այն, վոր վոչ վիճակագրությունն եր դեռ ևս սովորել հարմարացնել իր ձևերը ոպերատիվ հաշվետվության ձևերին և վոչ ել ոպերատիվ հաշվետվություններ կազմողները՝ իրենց ձևերը ժողովրդատնտեսական հաշվառման կարեքներին: Այս խզումն այժմ վերացվում ե շնորհիվ տնտեսական և հասարակական զարգացման նոր ըրջան անցնելու: Ժողովրդատնտեսական հաշվառումը (նախկին «վիճակագրությունը») միաձուլվում ե ոպերատիվ հաշվետվության հետ մի հունի մեջ, նույնիսկ հարց ե դրվում մի լելակետային հունի մեջ միաձուլելու

հաշվառման բոլոր տեսակներն ընդհանրապես, այն եւ ժողովրդատնտեսական հաշվառումը, հաշվապահական հաշվառումը և տեխնիկական հաշվառումը: Յուրաքանչյուր բանվորական տեղի համար լրացվող սկզբնական միասնական փաստաթուղթը պետք ե ամփոփի իր մեջ բոլոր տվյալները, վորոնք հետագալում բաժանվում են յերեք հիմնական ուղղությամբ: այդպիսի փաստաթուղթը պետք ե լինի նույնքան հակիրճ և պարզ, վորքան մարդաբանաբի թերթիկը, բայց վորից կարելի լինի դուրս բերել նույնքան բազմազան յեղրակացություններ, վորքան նույն թերթիկից: Հաշվառման բնագավառի արմատականները խոսում են հաշվառման ավելի ուժեղ միավորման, ունիֆիկցիայի մասին, այն և ժողովրդատնտեսական և հաշվապահական հաշվառման միաձուլման, կամ ավելի ճիշտ՝ հաշվապահության վերացման մասին: Նման առաջարկությունը սակայն՝ հանդիսանում ե նույնպիսի «ձախ խոտորում» ինչպես «վիճակագրությունը» ամբողջովին «հաշվառումով» փոխարինելու առաջարկը:

#### 8. ԿԱՐՈՂ ԵՆՔ ՄԵՆՔ ԱՐԴՅՈՒՔ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԵԼ ՈՂԵՐԱՏԻՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՔ: ՀԱՇՎԱ-ՎԻՃԱԿԱՎ-ԴՐԱԿԱՆ ՍՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Զի կարելի վիճակագրությունն ամբողջովին հաշվառումով փոխարինել նաև ոպերատիվ հաշվետվությունը լրացնելու համար նյութեր «գրախց» հավաքելու և վիճակագրական յեղանակից այժմ իսկ հրաժարվելու խմասով: Մենք վոչ մի կերպ դիու ևս չենք կարող հրաժարվել, ցուցակագրություններ կատարելուց,

հարցաթերթիկներ և հետազոտություններ կատարելուց, ինչպես և թղթակիցների գործնելություններից (որինակ զների դրանցման ժամանակ), քանի վոր ժողովրդատնտեսական հաշվառման հիմնական բազան — ոպերատիվ հաշվետվությունը — դեռ ևս չի դարձել ամուր, համատարած, միասնական ճիշտ գործողություն: ԶԵ վոր մենք միայն նոր ենք կառուցում սոցիալիզմը, հետևապես և համաժողովրդական հաշվառմամբ. չԵ վոր դեռ ևս հաշվառման դրությունը կրտնտեսություններում, խորհրդային տնտեսություններում, առևտրական ձեռնարկություններում, շինարարության մեջ, նույնիսկ արդյունաբերական գործող ձեռնարկություններում խիստ անբավարար ե: ԶԵ վոր մենք հիմա գտնվում ենք եկոնոմիկայի և մարդկանց դիտակցության մեջ կազմիտալիզմի մնացորդների և դրա հետ միասին — հաշվել չկարողանալու և չցանկանալու, աշքակապության և հաշվետու տվյալներն աղավաղելու դեմ պարագելու ամենայեռուն շրջանում: ԶԵ վոր մեր առաջախաղացումը կատարվում և այնքան արագ, նրան գույկակցող քանակական և վորակական տեղաշարժերը, անտեսական տարրերի տեղադրության մեջ կատարվող փոփոխություններն ալիքան լուրջ են, վոր պարբերական հաշվետվական նյութերն իվիճակի չեն լինում արտացոլելու կատարվող բոլոր փոփոխությունները: «Դրանց դիտելու» և նյութերը միանվագ հավաքելու վորոշ և զգալի մասը, ինչպես և մի շարք վերահսկիչ միջոցների գործադրումը մնում են իրեն անխուսափելի բան: Ալդ միջոցներն ընդհանուր առմամբ նշանակում են՝ ոպերատիվ հաշվետվությանը զուգընթաց կազմակերպել հաշվառման գործողություններ:

Ի վերջո պետք ե ասել վոր մեր ժողովրդատնտեսական հաշվառման սիստեմի գործունելությունը ներկա ետապում հանդիսանում և հաշվա-վիճակագրական գործունելություն: Վոչ թե միայն վիճակագրական, ինչ պես հինգ տարի առաջ, և վոչ ել միայն հաշվառման, ինչպես այդ կուզեյին այն ընկերները, վորոնք հակում ունեն թուչք գործել զարգացման աստիճանների վրա-լից և ընդհանրապես պարզացնել հարցադրումը.

Այդ գործունելության խնդիրներն ընդհանուր առմամբ հանգում են այն բանին, վոր վորջ խորհրդային պետական և տնտեսական ապարատի և վորջ խորհրդային հասարակության ոժանդակությամբ պետք և ծավալելու ամրացնել ժողովրդատնտեսական հաշվառման և դրա հետ միասին «համաժողովրդական հաշվառման» հիմնական բազան — ներենիսեսական ոպերատիվ հաշվառումը, մեր տնտեսության բոլոր ողակներում ու բնագավառներում, կառուցել այն՝ մեթուգիական, կազմակերպական ու տեխնիկական կողմերից, հաշվառման տեխնիկայի նորագույն նվաճումների հիման վրա, հարմարեցնելով ու վերամշակելով այն սոցիալիստական պայմանների համապատասխան, պահպանել և լրիվ ծավալով ոգտագործել վիճակագրական տպարտաւրայի այն բոլոր տարրերը, վորոնք շարունակում են դեր խաղալ զարգացման ներկա ետապում, կամ ընդհանրապես լիններկան լին պահպանման, հաշվա-վիճակագրական աշխատանքը ճիշտ կերպով փոխադարձ լիններկան վիճակի մեջ դնել պլանացին աշխատանքի հանդեպ, ուժգութեան պայմանական նիւթ բվի համար, վորը հանդիսանում և քաղաքական նշանակություն ունեցող հիմնական լողունգ, հասնել այն բանին, վոր հաշ-

վալին թիվը լինի ակտուալ թիվ, վոր նա յետ չմնա  
տնտեսական և հասարակական ճակատների մեր պար-  
քարից, արտացոլի իր մեջ այդ պալքարը, ինչպես  
հայելու մեջ և տարբերվելով ինչպես լենինս եր արտա-  
հալտվուա «կազոնի» վիճակագրական թվից, կարողա-  
նա ծառայել այդ պալքարին վորպես ողնություն ու  
զինք, և վերջապես համեմ այն բանին, վոր հաշվառ-  
ման թվերի սխատեմը շաղկապվի միասնական հաշվե-  
կշու մեջ, վորը համապատասխանի մեր վորջ տնտե-  
սական աշխատանքի շաղկապմանը միասնական ժողո-  
վրդական պլանում:

Այդ բոլորին համեմ կարելի յե վոչ թե միանդա-  
մից, այլ միան բազմակողմանի իւրկարատե ջանքերով։  
Բայց այդ բոլորին կարելի յե և պետք և համեմ, քանի  
վոր այդ կինի սոցիալիստական տնտեսության և  
սոցիալիստական հասարակության կառուցման կողմե-  
րից մեկը՝ առաջիկա հնգամյա ժամանակամիջոցի հա-  
մար դրված խնդրի հիմքը։

## 9. ՍՈՅԻՑԼԻՄՑԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՄՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ամենայն վորոշակիությամբ կոնկրետացնենք ժո-  
ղովրդատնտեսական հաշվառման մոտիկ ապագայի  
խնդիրները։

Ամենահիմնական և ամենալայն խնդիրը, ինչպես  
արդեն նշել ենք, ընկնում ե վորջ խորհրդակին, տըն-  
տեսական, պետական ապարատի, վորջ խորհրդակին  
հասարակության վրա, և վոչ թե միան ժողտնտհաշ-  
առման վարչության մարմինների մեկ հատուկ սխա-  
փառման վրա։ Այդ, հիմնական բազայի — ոպերատիվ ներ-  
տեմի վրա։ Այդ, հիմնական բազայի — ոպերատիվ

տնտեսական հաօվառություն — ամբացման ու զարգացման  
խնդիրն ե, իսկ քանի վոր խոսքը վերաբերում է  
ստորին կետերին՝ շատ դեպքերում նաև նոր կառուց-  
ման խնդիրը, ֆաբրիկաներն ու գործարանները, նո-  
րակառուցներն ու առևտրական ձեռնարկություննե-  
րը, խորհրդակին տնտեսություններն ու կոլտնտեսու-  
թյունները պետք ընդունվեն վորպես հաշվառման  
բջիջներ։ Յուրաքանչյուր արդյունարերական ձեռնար-  
կություն պետք և հասնի այն բանին, վոր ամենա-  
հարվածային առաջապոր գործարանների որինակով  
ունենա ամենորյա հաշվետվություն, իր արտադրու-  
թյան արդյունքների՝ ինչպես ավարտված արտադրան-  
քի, նույնպես և ցեխալին արտադրանքի վերաբերյալ։  
Յուրաքանչյուր խորհրդակին և կոլիկտիվ տնտեսու-  
թյուն պետք և աշխատի դնել ցանքերի, բերքատվու-  
թյան ու բերքահավաքի, հոտի բազմացման ու անաս-  
նապահության արդյունքների, նույնպես և կոլտըն-  
տեսականների ծախսած աշխատանքային ժամանակի  
միշտ հաշվառման գործը։ Այդպիսի խնդիրը հանդիսա-  
նում է միաժամանակ թե կազմակերպչական տնտե-  
սական, թե կուլտուր-լուսավորական, թե հասարակա-  
կան-քաղաքական, թե տեխնիկական-մեթոդիքական  
խնդիր։ Այդ մի հարց ե, վոր միաժամանակ վերաբեր-  
կում ե թե տնտեսական միավորների դեկավար ապա-  
րատի ամբացման, թե դրագիտ հաշվեառների մի ամ-  
բորջ բանակի պատրաստմանը, թե այս վերջիններիս  
ամբացման իրենց իսկ աշխատավորներից կազմված  
ուժանդակիչ և վերահսկիչ թջիջներով, թե միաժամանակ  
հաշվառման պարզ, մեթոդոլոգիական ճիշտ և հարմար ձեւ  
տալը, նմանապես հաշվառման ապահովման այնպիսի  
անհրաժեշտ տեխնիկական միջոցներով, ինչպես ըլանկ-

ները, թուղթը, գրենական պիտուղները, պարզ համերխները, իսկ աստիճանաբար՝ նաև մեջենալացված հաշվի ամենակատարելազործված միջոցներով, վորովհետեւ տրակտորի, կոմբայնի, կթելու, սիլոսային և այլ մեջենաների յետևից խորհրդային տնտեսություն և կոլտնտեսություն պիտք ե մտնի նաև ժամանակակից հաշվային մեջենան:

Այս բոլորից յերեսում և, թե վորքան խոշոր և բարդ ե այս խնդիրը, վորքան իր լուծման համար նա պահանջում ե բոլոր աշխատավորների համակցված ջանքերը: Հատուկ կազմակերպության — ժողովրդատնտեսական հաշվառման — գերը այստեղ չի կարող հանդիսանալ այն, վոր փորձի լուծել այդ խնդիրն իր գերատեսչական ուժերով. այդ կլիներ անհուսալի բյուրոկրատական ուստուգիզմ: Ժողովրդատնտեսական հաշվառման կազմակերպությունը պետք ե խթանի, արագացնի այդ պրոցեսը, տեխնիկապես ու մեթոդոլոգիապես միավորի այն ու ղեկավարի, բայց ղեկավարի գերատեսչությունների ու տնտեսական կազմակերպությունների միջոցով և վոչ թե նրանց գլխի վրայով: Շատ ցանկալի կլիներ հրավիրել համասիռելենական հատուկ համագումար ստորին հաշվառման դժով, իր ենց իսկ ստորին կետերի ներկայացուցիչների ամենալայն մասնակցությամբ. ափելի նպատակահարմար ե հրավիրել յերկու համագումար, մեկը՝ ինդուստրիալ-առևտրական և մյուսը՝ գլուխատնտեսական հաշվառման դժով: Այդ համագումարներում կարելի կլիներ հանրագումարի բերել ստորին ողակների վորոձը, ստուգել և մշակել հաշվառման ձեռքը, նրա կազմակերպական կառուցվածքն ու մասսաների մասնակցության ձեռքը նրանում, քննարկել հաշվառման նորագույն մեթոդները ստորին ողակներում գործադրելու, հաշվեառների կադրեր պատրաստելու և այլ հարցեր:

10. «ՊԵՏՊԼԱՆԻՆ ԿԻՑ ՃՈՂՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ» ԺՈՂՈՎՐԴԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՐՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՄԻՍՏԵՄԻ ԱՄՐՈՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հաշվառման բազայի ամբացման հարցին հարում ե հաշվային «հումքը» վերամշակող ու նրանց ժողովրդատնտեսական նշանակության ամփոփումներ կազմող և ընդհանրապես վողջ հաշվառման աշխատանքը ղեկավարող ապարատի ամբացման հարցը: Մենք այս ակատի ունենք ինչպէս գերատեսչական ու հիմնարկալին հաշվային մարմինները, նույնպես և հատկապես ժողովրդատնտեսական հաշվառման վարչության հատուկ սիստեմը: Ինչ վերաբերում ե առաջիներին, ապա միայն ծանր արդյունաբերության ժողոմատը և հաշորդակցության ճանապարհների ժողկոմատն ունեն վաղուց գոյություն ունեցող և քիչ թե շատ կարգի բերված միջանկալ և կենտրոնական հաշվային ապարատ: Մատժողկոմատը և Հողժողկոմատը առ հեռվից ընթանում են այդ ժողկոմատների յետկոց: Մյուս նոր կազմակերպված տնտեսական գերատեսչություններն ունեն հաշվառման չափազանց թուլլ մարմիններ: Կապիտալ շինարարության հաշվառումն ամենուրեք անբավարար ե: Բոլոր համապատասխան ողակներն անհրաժեշտ ե յեռանդուն կերպով ուժեղացնել: Բայց յեթե առանձնապես շտապ ու լեռանդուն չուժեղացվեն ժողոտնտհաշվառման վարչության մարմինները, վորպես կենտրոնական ղեկավար սխատեմի, բոլոր վերեւ նշված և ստորև նշվելիք խորհրդները կմնան լոկ բարի ցանկություններ: Կենտրովարի նախկին սիստեմը Պետպլանի հետ միաձուլ-

վելու շրջանում (1930-1931 թ.) թ. բավականաշատի  
 թուլացավ: Այդ շրջանում, երբ չերկերը ապրում եր  
 պատմական բուռն քեկում, հաշվացին-վիճակագրական  
 աշխատանքի ասպարեզում կատարված անվիճելի դրա-  
 կան տեղաշարժերի հետ միասին (այսպէս կոչված  
 «վիճակագրական հեղեղ դի» վերացումը, հաշվառման  
 «գերատեսչական» ողա կների առաջացումը, նրանց պե-  
 տական վիճակագրութիւնը յենթարկելը և ալև-  
 իրադրությունն ընդհան բապես սակավ նպաստավոր  
 եր հաշվառման կարգավորված աշխատանքի համար:  
 Կազմակերպական տեսակետից Պետպլանում գտնվելը,  
 դրական արդյունքի հետ միասին (պլանային ու հաշ-  
 արձին աշխատանքի համաձայնեցումը) տվեց և բացա-  
 սական հետեւանք. պլանային մարմինները հաշվառումը  
 ամառում ելին յենթակա և սպասարկող աշխատանք,  
 հաշվալին ապարատների պլանային մարմիններին  
 հատկացված ուժերն ու միջոցները մեծ մաս չեղ-  
 ողափործվել են այն խնդիրների վրա, վորոնք համար-  
 վել են գլխավոր: Դրան ավելացրած և այն, վոր յեթե  
 պլանային մարմինների համար մասնավոր տնտեսու-  
 թյան վանումը հանրախնայված տնտեսության կողմից,  
 նշանակում եր միայն սկզբունքնորին արդեն լուծված  
 պլանավորման խնդիրի խորացում ու ընդլայնում, ապա  
 նախկին վիճակագրական մարմինների և առանձնա-  
 պես նրանց հին վորակալ կադրերի համար այդ նշա-  
 նակում եր սկզբունքորին նոր խնդիր դնել վորի  
 համար նրանք բավականաշատ պատրաստված չելին:  
 Ահա, թե ինչու մենք արշավում ենք հանուն «Ճիշտ  
 թվի» ու «համաժողովրդական հաշվառման», պետական  
 հաշվառման բուլացած հիմնական սիստեմով:

Արդեն ձեռք են առնված մի շարք միջոցներ ալդ  
 սիստեմի շտավ ամրացման համար: Փողկոմիորի վո-  
 րոշման համաձայն հին վիճակագրինները պետպլանա-  
 րի կողմից պետք ե յստ փոխադրվեն Ժողովնահաշ-  
 վառման վարչություն, հատուկ գերեսով սահմանա-  
 ված ե՝ պլանային և հաշվառման աշխատանքների  
 միաձուլման շրջանում, պլանային սիստեմից գուրս  
 դանված կենտվիճակարի նախկին աշխատակիցներին  
 գրանցման յենթարկել և վերադարձնել հաշվա-վիճա-  
 կագրական աշխատանքի: մասնագիտական կրթու-  
 թյան կամ աշխատանքի համապատասխան փորձությու-  
 նան անցած վիճակագրինները հավասարեցվում են առը-  
 տարագիտական-տեխնիկական աշխատողներին վոր-  
 ումների խրախուսվի նրանց վերադարձը հաշվին աշ-  
 խատանքի և կանխվի հաշվառման աշխատողների  
 հոսունությունը հետագայում: Այս բոլորը ապացուց-  
 վում ե նոր «Կանոնադրությամբ ժողովրդատնտեսա-  
 կան հաշվառման կենտրոնական վարչության մասին»,  
 վորի առաջին կետը ժ. Տ. Կ. Վ. Ն. համարում և վոր-  
 ում համամեթենական ինքնուրույն մարմին. վորը  
 կենտրոնացված ձեռվ գեկավարում և հաշվառման ու  
 վիճակագրության ամբողջ գործը Խ Ս Հ Մ-ի մեջ:  
 ժ. Տ. Կ. Վ. Ն. մարմիններն աշխատանքների համաձայ-  
 նեցման նպատակով գտնվում են համապատասխան  
 ուղանային հանձնաժողովներին կից\*) և այդ մարմին-  
 ների պետերը հանդիսանում են այդ հանձնաժողով-  
 ների նախագահների տեղակալները: Բայց հաշվառ-  
 ման մարմինների պետերը նշանակվում են անմիջա-  
 կանորեն, վերադաս հաշվառման մարմինների կողմից

\*) Բացառությամբ շրջանների ու քաղաքների, վորակ նրանք  
 դանվում են գործկոներին ու խորհուրդներին կից:

համաձայնեցնելով համապատասխան տեղական իշխանությունների ու գործկոմների հետ։ Նրանք անմիջականորեն յենթակա լեն իրենց սիստեմի վերադաս մարմիններին։ ԺՏՀԿՎ-նը կից և Պետպանին նույն իմաստով, ինչ Պետրանկը Գինժողկոմատին։ ԺՏՀԿՎ-ը Արշության սիստեմը նույնքան խիստ կենտրոնացված միասնական սիստեմ է, վորքան Պետրանկի ցանցը։ Քանի վոր ինչպես Պետրանկն ե անողոքաբար, առանց դեմքերը նկատի առնելու մտցնում տնտեսաշվարկը, նույնպես և ԺՏՀԿՎ-ը պետք է ամենուրեք՝ առանց դեմքերը նկատի առնելու՝ արմատացնի ձիշտ հաշիվ և ձեռք բերի ձիշտ թիւլ։

## 11. ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԽԱՆԻԿԱ- ԿԱՆ ԲԱԶԱՆ

Կերե նկարագրված միջոցառումները բարենպատճառագրային ստեղծում ժողովրդատեսական հաշվառման մարմինների ամրացման ու զարգացման համար (նոր կադրերի պատրաստման հարցի լուծման հիման վրա, վորի մասին՝ ստորև)։ Այդպիսի հիմքի վրա կարելի է կառուցել։ Ու թեև այդպիսի սիստեմի լիակատար կառուցումը չի ծածկվի մի գիտանտի կառուցման արժեքով, պահանջում է ժամանակի և ուժերի նույնպիսի ծախքեր, խորհրդակին հասարակախության նույնպիսի ուշադրություն դեպի իրենց, բայց և այնպես այս խնդիրը նույնպիս լուծելի լին ինչպես Ստալինգրադի արակտորանի կամ Մակնիտագրուսկի կառուցումը։

Քանի վոր մենք հիշատակեցինք արդունաբերական հսկաները, հարկավոր և կանգ առնել հաշվառման

աշխատանքների մեխանիկական բազայի, հետեւապես և նրա արդյունաբերական հիմքի խնդիրների վրա։ Մենք պետք ե լայն կերպով մեքենայացնենք մեր հաշվառման աշխատանքները, մեքենայացնենք նույնպես և արտադրական գործողությունների սկզբնական գրանցումը՝ գործադրելով ինքնազդիր մեքենաներ։ Առաջիկա հնդամյակի ընթացքում հաշվային աշխատանքների մեքենայացումը պետք ե հիմնականում ավարտիլ։ Այդ նշանակում ե հաշվային մեքենաների մի ամբողջ ասսորտմենտի մասսայական մուծումը՝ սկսած հաշվայիկերուծական և հաշվալիական գործողություններ՝ կատարող, տվյալներ խմբավորող ու ամփոփող մեքենաներից և վերջացրած կոոպորտեարներով ու արիֆմոմետրներով, այսինքն մեքենաներ, վորոնք իրենց աշխատանքում թեև նման են համրիչներին, սակայն նույն չափով, ինչ չափով ավտոմոբիլը նման ե սալիքն։ Հաշվային գործի մեքենայացման հնդամյալիակի վրա կառուցելու համար համապատասխան ձյուղի ծավալումը։

Այս նպատակով Փողկոմիսորից մոտ ժամանակներս հաստատել ե հաշվային մեքենաների հատուկ միավորություն կազմելու հարցը։ Անհրաժեշտ ե հնարավորության չափ լիումուն կերպով արագացնել նրա աշխատանքի ծավալումը, մասնավորապես ավարտել լիգովսկի գործարանի կառուցումը Լենինգրադում (հաշվելուծական մեքենաների արտադրության ապագա կենտրոնը)։ Անհրաժեշտ ե ուժեղացնել ու վերակառուցել Մոսկվայի գործարանները, վորոնք արտադրում են առավել պարզ մոդելներ, ինչպես և ապահով

վել միավորությունը, համապատասխան մենադաշտն հումկով։ Հումքի հարցն այստեղ պակաս կարեոր չե, քան տրակտորաշինաբարության մեջ։ Ճիշտ և, այստեղ շատ մետաղ չի հարկավոր և մետաղն այստեղ իր գերակշռող մասով բարձրորակ չե։ Բայց այստեղ հարկավոր և նիւթ զլանված և ձգված նյութ։ Յեթե մենք չենք ուզում բերել տալ արտասահմանից, ապա անհրաժեշտ և շտափ կարգով կազմակերպել մեղ մոտ համապատասխան արտադրություն, վորի մասին ծանր Արդյունաբերության ժողկումատը դեռևս չի ցուցաբերում պատշաճ հոգացողությունը. մինչդեռ հաշվառմեքենայական արտադրությունը պահանջում և արագ ծավալում վոչ միայն հնդամյա պլանի հեռանկարով, այլև անմիջապես, այսոր ևեթ։ Հոկաները մեղ մոտ աճում են սունկերի պես, իսկ հաշվաբն ցեխեր նըստում չկան, հաշվաբն գործը նրանցում մնում և տնալինագործական հիմքի վրա։

## 12. ՀԱՇՎԱՌՈՒԽՄԸ ՅԵՎ ՀՆԳԱՄՅԱԿԸ, ՀԱՇՎԱՌՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՍԻՍՏԵՄԸ ՅԵՎ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒԽՄԸ

Այժմ կազմակերպչական և նյութական նախադրյաներից անցնենք կոնկրետ խնդիրներին, վորոնք վերաբերում են բուն իսկ հաշվառման բովանդակությանն ու ձեին։ Ալդպիսի խնդիրները շատ շատ են և մենք կարող ենք կանգ առնել նրանցից միայն առավել հրամայականների վրա։ Այստեղ հարկավոր և ամենից առաջ նշել, վոր առաջին հնդամյակի ավարտում ու անցումը յերկրորդին, իրենց արտացոլումն են գործում նաև հաշվառման աշխատանքների մեջ։

Անհրաժեշտ և մի կողմից ամփոփել առաջին հեգամյա պլանի կատարումը։ Մի կողմից այդ պետք և անել արդեն հիմա, առաջին ՅՆ/4 տարվա կատարման տվյալների և վերջին ընթացիկ տարվա պլանային տվյալների հիման վրա։ Ալդպիսի աշխատանքը հիմք կծառայի այն ամփոփիչ տեսությանը, վորը պետք և հանդես գա սկզբից ուշ՝ յերկրորդ հնդամյա պլանի հետ միաժամանակ։ Յեթե հաշվառմակարական կազմակերպությունը լիներ ավելի ուժեղ, քան նա կա այժմ և յեթե նրա առաջ կանգնած չինելին մի շարք այլ, միանգամայն անհետաձգելի խնդիրներ, հարկավոր եր առաջին հնդամյակի ավարտումը հավերժացնել այսպես ասած մոնումենտալ վիճակաբրական աշխատանքով։ Համեմատն գեպս՝ ձիշտ գրված և բավականաչափ սպառիչ չեղրափակող տեսություն պետք և արվի մեր խորհրդային հասարակայնության ձեռքը։

Մյուս կողմից՝ հաշվառմակարական կազմակերպությունը պետք և մասնակցի և արդեն մասնակցում է յերկրորդ հնդամյակի մշակմանը՝ ոգնելով պլանային մարմիններին, տալով նրանց յելակետային նյութ և նրանց հետ միասին մշակելով այդ հնդամյակի ցուցանիշների սիստեմն ու ձեւը։ Նման աշխատանքը չափանց եյական նշանակություն ունի նաև հաշվառման սիստեմի համար։ Նա հարավորություն և տալիս պլանային և հաշվաբն ձևերի հետագա համաձայնեցմանը, գրգռում և մշակել հաշվառման ցուցանիշների կառ, միասնական սիստեմ, վորն ինքնըստինքան հանդիսանում և ամենաելական հերթական խնդիրներից մեկը։

Ցուցանիշների սիստեմի հարցին հարում և սկրզբական հաշվառման հարցը՝ առավել միատեսակ,

պարզ, ամենավորը ծավալի հասցված (լրացվող փառաթղթերի և սրանց դիրքերի թվով) ստորին հաշվետվության ձևի հարցը: Հարցի վերջնական դրվագքն այստեղ հանդիսանում է վերև հիշված «միասնական սկզբնական փաստաթուղթը»: Այդ հարցի լուծումը մի տարգա գործ չե — այն ինթադրում է մեթոդոգիտական խողոք աշխատանք, նա կապված է արտասահմանցան փորձի լուրացման ու վերամշակման, իերկարատեկաղմակերպչական աշխատանքի հետ և այլն: Բայց այս հարցը այնուամենայնիվ մնում է վորպես ելական հերթական խնդիր, թեև ըստ կատարման՝ իերկարատեկ:

### 13. ՈԳԵՐԱՏԻՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ԹՈՒՅԼ ԿԵՏԵՐԸ, ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԱՌՈՒՄՆ ՈՒ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ԺՈՂՈՎՐԴԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԻԱՆՄԱՌԵՄՆ

Բայց դրա փոխարեն ձեռնարկությունների ոպերատիվ հաշվետվության, վորպես հաշվային «հումքի» գլխավոր տեսակի մշակման լուրացումը հանդիսանում է անմիջական կատարման լենթակա խնդիր: Արդյունաբերական ձեռնարկությունների ու խորհրդային տնտեսությունների տարեկան հաշվետվություններն առաջին անգամ մշակվելու յեն ընթացիկ տարում (1931 թ. հաշվետվություններ): Ակսվելու և նույնպես ավելի կարճ ժամանակամիջոց ընդգրկող հաշվետվությունների մշակումը:

Դրա հետ կապված է գերատեսչական նաև վետարյան ձեմերի հաստաման գործի կանոնավորման հարցը: Վիճակագրական «հեղեղը» ժամանակին դադարեց-

վեց բոլոր հաշվառման-հաշվետվական ձեռքի մի տեղում հաստատելը կիրառելու միջոցով: Այդպիսի մարմին այժմ հանդիսանում է ԺՀՀԿԸ: Սակայն համապատասխան ապարատի «կարողությունը» բավական չե, նրա վորոշումները չեն հրապարակվում, դանդաղ են տեղ հասնում: Անհրաժեշտ ե այդ բացերը վերացնել և համապատասխան աշխատանքը դարձնել ավելի ճկուն:

Այստեղից բնականորեն պետք է անցնել ընթացիկ զպերաշիլ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ հաւալուման առավել թույլ կետերի հարցին, վորոնք յենթակա յեն ուժեղացման ու տերի հարցելավման: Ինչպես արդին նշված է՝ հաշվառման ապարատի գրությունը բոլոր նորակազմ տնտեսական ժողկումատներում և վարչություններում չափազանց ժողկումատներում և Այդպես է նրանցում նաև հաշվառման անբավարար է: Այդպես է նրանցում նաև հաշվառման գրությունը: Այստեղ պահանջվում է վոչ միայն կազմակերպաված ամբացում այլ և մեթոդոգիտական ոգունություն: Մասնավորապես չափազանց թույլ է հաշվառման կոմանտֆողկումատներում, մինչդեռ կոմունալ գառումը կոմանտֆողկումատներում, ուղարկելու հարցերը հանդիսանում են ամենահրատապես հարցերից մեկը, նույնը վերաբերում է յերկու խմաստով ել թե առեվտրի, թե կապիտալ շինարարության հաշվառմանը: Աջակատանի հաւաքառման գծով անհրաժեշտ է վերակառուցել աշխատանքն՝ ուժեղացնելով ժեղարկացը վերաբերյալ ընկ. Ստալինի վեց աշխատանքի վերաբերյալ ընկ.

Սակայն, ընթացիկ արդյունաբերական արտադրության հաշվառման գծով նույնպես գործն այնքան ել թյան հաշվառման գծով առաջնարդության ժամանակագրար չե, անգամ ծանր արդյունաբերության ժողուակար պարագաների համար անհրաժեշտ ե մի կողմից պաքարել ճիշտ թվի համար, անհրաժեշտ ե այդ կողմից պաքարել ճիշտ թվի համար, վորից կատարվող շեղումները մասամբ բացատրվում են

կազմակերպական և մեթոդոլոգիական պակասություններով, մասամբ ելմի շարք տնտեսավարների ձգտումով՝ այսպես թե այնպես դրստելու տվյալները։ Շեղումներըն իրականությունից, ճիշտ և արտահայտվում են աննշան թվական մեծություններով (ամեծ թվերի որենքը շարունակում ե գործել), բայց և այդ շեղումները պետք ե վերացվեն լիովին։ Մյուս կողմէց ովետք ե պայքարել վորակական ցուցանիշների հաշվառումը դնելու համար, վորի նկատմամբ ուշադրությունը միառժամանակ նույնքան թուլացել եր, վորքան ուշադրությունը հենց դեպի բուն վորակական ցուցանիշները։

Բայց հատկապես պետք ե ծանրանալ զյուղատեսառության ընթացիկ հաշվառման բարելավման խնդրի վրա։ Հողժողկոմատը չունի վոչ այնպիսի կենարոնական հաշվային ապարատ, ինչպես ծանր-արդյունաբերության ժողկոմատը, վոչ այնպիսի ռատորին ցանց», ինչպես խոզոր ինդուստրիալ ձեռնարկությունները, վորոնք միաժամանակ հանդիսանում են նաև կուլտուրական ոջախներ։ Մանր բուրժուական ու բուրժուական ազդեցությունը նրա ծալրամասերում առանձնապես ուժեղ ե, ինչպես ցույց տվեցին աչքակապության լայն հրապարակված դեպքերը շաքարի և հացահատիկային խորհանուսություններում, մի շարք կուտահետություններում և այլն։ Դրա հետ միասին հողժողկոմատի մի քանի աշխատողներ վորոշ ձգտումներ են հայտաբերում։ հաշվային տվյալները փոխարինելու պլանային տվյալներով «իրականը—յինթադրականով» ինչպես և հաշվառման նյութի մեջ մտցնել մեթոդոլոգիապես անհանդուրժելի ուղղումներ։ Ընդհանուր առմամբ այստեղ ել «մեծ թվերի որենքը» հավասարա-

կշռում և իրական թվից դեպի այս կամ այն կողմը կատարվող շեղումները։ Մինչդեռ անհրաժեշտ ե միանդամայն ճիշտ իմանալ իրերի դրությունը յուրաքանչյուր ճակատամասում և հաշվառման ճիշտ դրվածքը դյուղատնտեսական արտադրության բոլոր ողակներում նրա կազմակերպչական-տնտեսական ամրացման նախադրյալներից մեկն է։ Ահա թե ինչու պետք ե վոչ միայն լուրջ ուշադրություն դարձնել գյուղատնտեսական ընթացիկ արտադրության ուժեղացման ու լավացման վրա, այլև զարգացման տվյալ աստիճանում, մեր կարծիքով, չի կարելի լուր գնալ առանց հաշվագրահակիչ հանձնաժողովների սխստեմի՝ շրջանում, մարզում և հանրապետության մեջ։ Այդ խորհրդակցությունները պետք ե քննեն և ստուգեն ցանքի ընթացքի, բերքատվության տեսակների սպասվող ընդհանուր բերքի տվյալները՝ կազմակերպելով նույնպես զանազան տեսակի վերաստուգիչ գործողություններ։

Այստեղից յերեվում ե, կոր ժողունտեսության հաշվառման մարմինների սխստեմում մոտ ապագայում ուշադրության ամենամեծ մասը պետք ե հատկացնենք ընթացիկ հաշվառման հարցերին և թե վորքան սխալ լինենք «պլանի կատարման» ստուգման խմբակը (կամ, հին ձևով՝ կոնլուկուր խմբակը) պլանային մարմնին հանձնելը, ինչպես այդ մասին հարց եր հարուցել Պետական ժամանք վարչության կազմակերպման հենց առաջին պահին։ Ամփոփ ընթացիկ հաշվառման խմբերը («կատարման» ստուգման խմբեր») հարկավոր են հաշվագիծակագրական սխստեմին, վորպես հիմնական կերպարագրական սխստեմին, վորպես հիմնական կերպարունացում կենտրոնացվում ե գործերի ամբողջ տեր, վորոնցում կենտրոնացվում ե գործերի ամբողջ մեր, կամ ուղղությունը ժողովրդատնտեսական ընթացքի հակողությունը ժողովրդատնտեսական ընթացիկ հաշվառման բնագավառում։ Սակայն ընթացիկ

հաշվառման առաջնակարգ նշանակությունն ամենելին՝ չի թուլացնում ժողովրդական տնտեսության հաշվե կ շուրջ աշխատանքների նշանակությունը, վորոնք տալիս են վերաբարեպահության վողջ պրոցեսի կատարյալ և ամբողջական պատկերը:

#### 14. ԱՌԱՋԿԱՆ ՑՈՒՑԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՑԵՎ ՑԵՐԿՐՈՐԴ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԸ

Ցեթե ժողովրդական տնտեսության դինամիկայի աշխատանքները չեն բացառում նրա հաշվեկշռի աշխատանքներ, ապա զարգացման տվյալ աստիճանում, ոպերատիվ ներտնտեսական հաշվառման ամրացնելու նկատմամբ ուժեղ հոգատարությունը չի բացառում ցուցակագրությունները ճիշտ անցկացնելու հոգատարությունը։ Մոտ ապագայում մենք պետք են կատարենք ամբողջ հինգ արդիսի ցուցակագրական գործողություններ, ներառյալ արդեն կատարված եւ այժմ մշակվող անասունների ցուցակագրությունը։ Մրան հաջորդում են այժմ սկսվող արդյունաբերական սարքավորման, ցուցակագրությունը (նման գործողություն վիճակագրության պատմության մեջ առաջին անգամն են կատարվում) և խոստանում են տալ բացառիկ հարուստ և արժեքավոր նյութ, վորպիսին չունի և վոչ մի բուրժուական պետություն)։ Բանվորների կազմի ցուցակագրությունը ըստ նրանց վորակի, այնուհետև կոմունալ ձեռնարկությունների, ցուցակագրությունը և վերջապես ավելի հեռավոր ապագայում — յերկրորդ խորհրդային ընդհանուր մարդահամարը։ Այս բոլոր ցուցակագրություններն անհրաժեշտ են մի կողմից՝ վորպիս հենակետներ պլանային կառուցումների համար, մյուս կողմից՝ վոր-

պես յելակետներ դինամիկ հաշվառման համար և վերաշապես՝ վորպիս նյութ առաջնահերթ գործնական ձեռնարկությունների համար։ Հենց դրանով են հիմնավորվում նրանց գործնական կարեռություններ և դրսեվորվում այս դատողությունների անհիմն լինելը, վորոնց համաձայն սոցիալիզմի ժամանակ պետք են հրաժարվել ցուցակագրություններից։

Իսկ վերաբերում են մարդահամարին, ապա նրաժամկետի վերաբերյալ յեղել են զանազան դատողություններ։ Առաջարկ են յեղել կատարել այն 1932/33 թվե ձմռանը։ Այս առաջարկը հիմնավորվում եր 1926 թովյալների հնանալով, ազգաբնակչության, նրա կազմի և տեղավորման վերաբերյալ տվյալների կարեռ նշանակությամբ՝ բոլոր ընթացիկ պլանների կազման համար և, վերջապես, մարդահամարը յերկրորդ հնգամյակի սկզբին կատարելու ցանկությամբ։ Մյուսը կողմից՝ յերկու եր արտահայտվում, թե հաշվավիճակագրական սիստեմի ներկա զրությունը, բազմաթիվ այլ լուծման յենթակա երական խնդիրների և ժամանակի սղության հետևանքով (ըստ սովորության վերահաշվագրությունների նախապատրաստվում են սկսելուց մեկ ու կես-յերկու տարի առաջ) մարդահամարը առաջիկա ձմռան համար վատ նախապատրաստված կլինի։ Բացի դրանից՝ չափաղանց կազմումը, քանի վոր հաշվալին մեքենաների արտադրությունը դեռևս չի ծավալված և մենք ունենք աշխատողների զգալի պակաս։ Վերջին նկատառություններից յելնելով նպատակահարմար և գտնված մարդահամարը կատարել 1933/34 թ. ձմռանը, սպակայն վոչ ուշ։

15. ԳԻՏԱ-ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՅԵՎ  
ԿԱԴՐԵԲԸ

Կարևորագույն հերթական խնդիրների թվարկումը  
մենք պետք ե փակենք յերկու հարցով, վորոնցից  
մեկը տեսական խնդիր ե հանդիսանում, իսկ մյուսը՝  
խորապես գործնական, բայց վորոնք միաժամանակ  
սերտ կերպով կազմած են միջևանց հետ:

Դրանցից առաջինը մերօղոլոգիական յեվ գիտա-հե-  
տազոտական աշխատանքի ծավալումն ե, վորի նկատ-  
մամբ այժմ սուր պահանջ ե զգացվում: Հին վիճակա-  
դրական մեթոդոլոգիան խոշոր չափով կորցրել ե իր  
նշանակությունը: Հարկավոր ե մշակել սոցիալիստա-  
կան ժողովրդատնտեսական հաշվառման մեթոդոլոգիա:  
Հերեւում մենք կարողացանք միայն ամենաընդհանուր  
գծերով տալ այն ուղեցուցցները, վորոնցով նա պետք  
է ընթանա: Անհրաժեշտ ե ուժեղ կոլեկտիվ աշխա-  
տանք՝ հիմնված Մարքս-Լենինյան դիալեկտիկայի և  
համարյա բացառապես սոցիալիստական շինարարու-  
թյան փորձի վրա: ԽՍՀՄիության մեջ, վորպեսզի լու-  
ծենք այդ խնդիրը: Արտասահմանային փորձը ցուցումներ  
և տալիս հաշվառումը կազմակերպելու գերազանցապես  
ժամանակակից հաշվառեխնիկական միջոցների հիման  
վրա, վորոնք գործադրվում են բավականաչափ մե-  
խանիզացիայի և ավտոմատիզացիայի լենթարկված  
արտադրության խոշոր ձեռնակություններում, բայց  
միայն առանձին ձեռնարկություններում յեվ կապիտա-  
ժիզմի պայմաններում: Այդ արտասահմանային փորձը  
պետք ե հոգատարությամբ ուսումնասիրել և ոգտա-  
գործել: Բայց նա չի կարող պատասխան տալ այն հար-

ցին, թե ինչպես կառուցել հաշվառման միամնական  
սիստեմ ժողովրդական տնտեսության ամբողջ ճյուղեր-  
ում ու բնագավառում, պլանային տնտեսության,  
շերտավորված սոցիալիստական տնտեհաշվարկի և հա-  
մաժողովրդական հաշվառման պայմաններում: Նա պա-  
տասխան չի տալիս սոցիալիստական ոպերատիվ հաշ-  
վետվության կառուցվածքի, նրա ցուցանիշների սիս-  
տեմի և նրա սկզբնական հաշվառման մասին:

Բացի դրանից, տեխնիկական և տնտեսական  
տեսակետից ամենազրդացած ըուրժուական յերկրնե-  
րի տեխնիկական փորձը նույնիսկ, մեղ մոտ փոխա-  
դրելու և համապատասխան սահմաններում, համապա-  
տասխան վերամշակմամբ ոգտագործելու համար, հար-  
կավոր ե ավելի մոտիկ և կոնկրետ ծանոթություն այդ  
փորձին, քան այն, վոր մենք ունենք: Հետեւապես  
անհրաժեշտ ե այս գծով ել ծավալել ուժեղ աշխա-  
տանք, արտասահման ուղարկել մեր մի շարք աշխա-  
տողների, ներգրավել արտասահմանից մի շարք խոր-  
հրդատուններ: Միևնույն ժամանակ կյանքը չի սպա-  
սում: Նա պահանջում է լրացել մի ամբողջ շարք միթո-  
դոլոգիական հարցեր աշխատանքի ընթացքում, ամեն  
որ, քանի վոր ամեն որ մենք գործնականորեն առաջ  
ենք ընթանում ծավալուն սոցիալիզմի ուղիղով:

Այստեղից պարզ ե, թե վորքան կարելոր ե ամուր  
միթոդոլոգիական, գիտա-հետազոտական կազմակեր-  
պության շուտափուցիթ կազմակերպումը, վոր հավասա-  
րաչափ ընդունակ լինի հարցերը տեսականորեն լուսա-  
բանելու և նրանց կոնկրետ գործնական լուծում տա-  
լու:

Կենտրոնական հաշվա-վիճակագրական նետազոտ-  
կան ինսիրուտը հիմնում այդ տեսակետից հանդիսա-  
նում է սուր անհրաժեշտություն:

Բայց սրա հետ կապված ե յերկրորդ հարցը՝ հաշվա-  
ղաշվիճակագրական կադրերի պատրաստումն ու վերա-  
պատրաստումը: Այս հարցը պակաս սրությամբ չի  
հանդինած մեր առաջ, յեթե միայն վոչ ավելի մեծ  
սրությամբ: Ներկա իրադրության մեջ նա հանդիսա-  
նում ե ամենավեռական ողակներից մեկը: Ստիլված  
էնք արձանագրելու, վոր վիճակագրական հին կադրե-  
րի «Փիզիկապես ու բարոյապես մաշվելու» հետ միա-  
սին, վորոնց ի հարկե պետք ե ոգտագործել ամբողջ  
100 °օպվ, վերջին տարիներում համարյա իսպառ  
բացակայել ե նոր կադրերի պատրաստումը: Մենք  
ունենք վոչ հաշվավիճակագրական Ակադեմիա, վոչ  
հաշվավիճակագրական ԲՈՒՀ-եր: սրանց փոխարեն  
ան սպիկավաթիվ վիճակագրական ֆակուլտետներ,  
սովորողների սահմանափակ քանակով և փոքրաթիվ  
տեխնիկումներ: Սրանց ամելի լավ չե դրված կադր-  
րային վիճակագրիների վերապատրաստման գործը:  
Մեղ հարկավոր են հազարավոր մասնագետներ բարձ-  
րագույն կրթությամբ, իսկ մենք ունենք միայն  
տասնյակներ ու հարյուրներ: Մեղ հարկավոր են տաս-  
նյակ հազարավոր հաշվառման «միջին տեխնիկներ»,  
իսկ մենք ունենք միայն հարյուրներ և հազարներ: Մեղ  
հարկավոր են հարյուր հազարավոր գրագետ հաշվառ-  
ներ, իսկ նրանց նկատմամբ յեղած պահանջը չի ծածկ-  
վում նույնիսկ 10 °օպվ:

Այս ուղղությամբ մենք շատ ժամանակ ենք կորց-  
րել և շատ ենք յետ մնացել հրամայական պահանջից:  
Ուրեմն՝ աշխատենք շուտ դուրս գտ այս դրությունից  
ժամանակավոր միջոցառութներով՝ մանավանդ՝ առկա  
կադրերին և նոր ներդրաված աշխատողներին վերա-  
պատրաստելու և վրահակալումը լրացնելու միջոցով:

Միաժամանակ ամենաշտապ կարգով ծավալենք հա-  
տուկ տեխնիկական կրթության մի ամբողջ ցանց՝ ըսկ-  
ած հաշվավիճակագրական Ակադեմիայից և ԲՈՒՀ-ե-  
րից մինչև վերապատրաստման դասընթացքները և  
առողին հաշվեաւների պատրաստման դասընթացքնե-  
րը: Ինչ վերաբերում ե վերջիններին, ապա այդ վոչ  
միայն ժամանակության և նրա տնտեսաշվարկային  
միավորության «Սույուղորդուչութիւն» գործն ե այլ և  
առաջին հերթին իրենց՝ տնտեսական գերատեսչու-  
թյունների ու կազմակերպությունների խնդիրը:

Մեթոդորդիան և կադրերը — հաշվառման բա-  
նակի շաբան ու հրամանատարական կազմը — խոշոր  
մասով կմնան համաժողովրդական հաշվառման համար  
մղվող պահպարի հաջողության հարցը:

## 16. Ի՞նՉ Ե ՆՇԱՆԱԿՈՒՄ ՀԱՇՎԱՌՈՒՄ

Այսպիսով հաշվառումը համարակական արտադրու-  
թյան նախադրյալների և արդյունքների ճիշտ գիտե-  
նալն ե: Հաշվառումը այն հիմքն ե, զորի վրա հենվում  
ե պլանը: Հաշվառումը՝ արտադրության ու բաշխման  
համաժողովրդական վերահսկողության հիմքն ե: Հաշ-  
վառումը կարևոր զենքն ե կապիտալիզմի մնացորդնե-  
րի, բուրժուական և մանր բուրժուական աղեցություն-  
ների ու տեսդենցների դեմ պայքարելու, մորթապաշ-  
տությունը, անբանությունը, անտնեսավարությունն  
ու հասարակական շահերի տնտեսումն արմատախիլ  
անելու գործում: Հաշվառումը՝ տնտեսաշվարկի, պրոգրե-  
սիվ գործակարձի, սարքավորման ճիշտ ոգտագործելու,  
սոցմրցման նախադրյալն ե:

Ճիշտ դրված համաժողովրդական հաշվառումը հա-

սարակական տնտեսության համար հանդիսանումին  
քն ալոգության նոր աղբյուր, նոր ռեզերվ, վորը հեշտացնում է առաջինակացումը:

ԱԵԲԻՑ ՍՈՎՈՐԵԳՐԵԼ Ե, ՎՈՐ ՍՈՅՏԻԱԼԻԶՄԸ ԴԱ.  
ՀԱՇՎԱՌՈՒՄ Ե.

ՀՀ Ազգային գրադարան



NL0192468

32

Գիր 75 կ.



Н. Осинский  
Что значит учет  
Госиздат ССРА Эревань 1933